



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՈՒՄ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

<b>ԹԵՄԱ</b>	<b>Գրաբարյան տարրը Պետրոս Դուրյանի պոեզիայում</b>
<b>ԱՌԱՐԿԱ</b>	<b>Գրականություն</b>
<b>ՀԵՂԻՆԱԿ</b>	<b>Մարկոսյան Հասմիկ</b>
<b>ՄԱՐԶ</b>	<b>Արմավիր</b>
<b>ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ</b>	<b>Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց</b>

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ .....	5
ԳՐԱԲԱՐՅԱՆ ԲԱՌԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ.....	5
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.....	17
ԳՐԱԲԱՐՅԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ .....	17
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	23
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	25

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Այնքան սիրած, այնքան լացած եմ իրեն համար, իմ երիտասարդությանս առաջին տարիներուն իր ցավովը ցաված և իր տառապանքովը տառապած եմ երկարորեն, իր տենդերը, իր գանգասները, իր հիվանդ կուրծքին հեքը և մրմունջները տարիներուն մեջեն եկած հասած են ինձի, ու կարծես մատներովս դպած եմ անոնց և ականջովս լսած, ինչպե՛ս պիտի ուզէի իր ժամանակին հասած ըլլալ ու գտնալ իր նվիրակա հյուղակին ճամփան ու ըսել իրեն, թէ ինչպես իր ցավերը կերկարաձգվին և կը թրթռան իմ հոգվոյս մեջ ...» :

Սա միայն Չապել Եսայանի խոստովանությունը չէ: Սա նաև սերունդների խոստովանությունն է:

Իր կարճատև կյանքի ընթացքում Պետրոս Դուրյանը գրել է քառասուն բանաստեղծություն, որոնք վկայում են բացառիկ հանճարի մտավոր խորությունն ու երևակայության թռիչքը:

Դուրյանը զարգացման նոր աստիճանի է հասցրել հայ պոեզիան: Նա կատարելագործել է հայ բանաստեղծության տաղաչափությունը, ռիթմը և պատկերային համակարգը:

Բանաստեղծ Պետրոս Դուրյանի ստեղծագործություններն իրենց գաղափարական բովանդակությամբ նորություն էին արևմտահայ իրականության մեջ: Նա հայ նոր գրականության առաջին խոշոր սիրերգակն է: Դուրյանի պոեզիան անոռնականում է ինքնատիպությամբ, պատկերավոր մտածողությամբ և խոր հուզականությամբ: Նրա պոեզիան մարդկային հոգու բռնկումների մի անկրկնելի մատյան է: Եվ անձնականորեն այնքան կենսագրական են այն բռնկումները, որ գրեթե անհնար է սահման գծել բանաստեղծի և իր «քնարական հերոս»-ի միջև: Պետրոս Դուրյանը խոհափիլիսոփայական խառնվածքի բանաստեղծ է: Նրա բանաստեղծությունները փիլիսոփայական մենախոսություններ են, որտեղ բնությունն ու սերը հանդես են գալիս որպես բանաստեղծի տիեզերական խոհերի բաղադրիչներ:

Պետրոս Դուրյանն ամենից առաջ ընդլայնեց բանաստեղծության ներքին տարողությունը՝ հասցնելով այն փիլիսոփայական մեծ ընդհանրացումների: Նա կատարելագործեց հայ բանաստեղծության տաղաչափությունը, ռիթմը, և պատկերային համակարգը, նոր իմաստ տվեց այլաբանությանը, համեմատությանը:

«Գրաբարյան տարրը Պետրոս Դուրյանի պոեզիայում» խորագրով մեր աշխատանքի նպատակն է՝ ներկայացնել բանաստեղծի քնարերգության մեջ տեղ գտած գրաբարյան իրողությունները՝ գնահատանքի արժանացնելով դրանց լեզվաոճական արժեքը: Այս նպատակի իրականացումը ենթադրում է հաջորդաբար լուծել մի քանի **խնդիրներ**՝

- 1) Բացահայտել Դուրյանի քնարերգության մեջ առկա գրաբարյան տարրերը և քարտազրել ըստ գործառական նշանակության՝ տարբերակելով այդ տարրերի մեջ բառային և քերականական իրողությունները,
- 2) Գնահատել գրաբարյան տարրի՝ որպես բանաստեղծական տողի ու հանգի կարգավորման, մտքի ձևավորման անհրաժեշտ միջոցի դերը բանաստեղծական խոսքում,
- 3) Հիմնավորել գրաբարյան բառերի ու բառաձևերի գործածության ոճարտահայտչական նշանակությունը բանաստեղծի չափածոյի լեզվում,
- 4) Գնահատել բանաստեղծական խոսքում գրաբարի իրողությունների օգտագործման դուրյանական միտումները:

Աշխատանքի կառուցվածքն այսպիսին է. Այն սկսվում է ներածությամբ, որտեղ խոսվում է աշխատանքի նպատակի, նրա իրականացման խնդիրների, թեմայի արծարծվածության աստիճանի, գործնական արժեքի մասին, անդրադարձ է կատարվում 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրական լեզվի կանոնավորման խնդիրներին, դրանում Պ. Դուրյանի լեզվի ազդեցությանը:

Աշխատանքը ունի երկու գլուխներ: Առաջին գլուխը վերնագրված է «Գրաբարյան բառային իրողությունները Պետրոս Դուրյանի պոեզիայում», որտեղ ներկայացնում ենք գրաբարի նախադրություններ, նախդիրներ, մակբայներ, ածականներ՝ համեմատության աստիճանների գրաբարատիպ կազմությամբ, դերբայներ, գոյականներ և այլն, որոնք տեղ են գտել Պ. Դուրյանի բանաստեղծություններում: Աշխատել ենք նաև պարզել բանաստեղծի կողմից դրանց գործածության պատճառները, որոնք ինչպես նկատում ենք աշխատանքում բազմազան են՝ դրանց մի մասը գործածել է հանգավորման նպատակով, մի մասը գործածել է, որպեսզի բանաստեղծությանը հաղորդի ոճական արտահայտչական նրբերանգ:

Երկրորդ գլուխը վերնագրել ենք «Գրաբարյան քերականական իրողությունները

**Պետրոս Դուրյանի պոեզիայում:** Այստեղ խոսքը գնալու է անունների, գրաբարյան հոլովաձևերի, բայերի գրաբարյան խոնարհման ձևերի, քերականական հոգնակիի դրսևորման, գրաբարյան դերբայական ձևերի, հոդերի օգտագործման գրաբարյան ձևերի և այլնի մասին:

Ուսումնասիրությունն

ավարտվում է Եզրակացություններով, որտեղ տեղ են գտել վերոնշյալ գլուխների շարադրանքից բխող հետևությունները, հիմնավորումները և եզրահանգումները:

Աշխատանքն ունի նաև օգտագործված գրականության ցանկ, շարադրված է համակարգչային շարվածքի 26 էջի վրա:

Աշխատանքում նկատի ենք ունեցել Պետրոս Դուրյանի «Երկեր» (Եր. , 1947թ. , 441 էջ) –ը, Պետրոս Դուրյանի «Երկերի ժողովածու»-ն (Եր. , 1971թ. , 366 էջ), ինչպես նաև մեծ գրողի մասին տարբեր տարիներին հրատարակված ուսումնասիրություններ, գրաբարի և արևմտահայերենի վերաբերյալ զանազան աշխատություններ, որոնց ցանկը ներկայացվում է մեր ավարտական աշխատանքի վերջում:

Իբրև հետազոտական հիմնական սկզբունք առաջնորդվել ենք համադրական և վերլուծական մեթոդներով:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ԳՐԱԲԱՐՅԱՆ ԲԱՌԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Հայերենը 5-րդ դարասկզբին դառնալով գրի ու գրականության լեզու՝ անցել է զարգացման յուրօրինակ ուղի՝ իր բանավոր ու գրավոր տարբերակներով, տարբեր

լեզուների հետ առնչություններով ու փոխազդեցություններով:

Լեզվի զարգացման գրավոր շրջանի գրաբարյան և միջինհայերենյան փուլերին 17-րդ դարում հաջորդած աշխարհաբարյան շրջանը, պատմական հանգամանքների բերումով ու բարբառային ինքնատիպ տարբերակվածության առկայությամբ, 18-րդ դարից ներկայանում է հայերենի արևելահայերեն և արևմտահայերեն տարբերակներով, որոնք 20-րդ դարի սկզբներից սկսած ունեցան գոյության, գործառության ու զարգացման տարբեր պայմաններ, հնարավորություններ:

Արևմտահայերենի բանավոր լեզվի բառապաշարը գնալով հարստացվեց գրական երկերում՝ ի հաշիվ գրաբար և գրաբարյան արմատներով բարդված նոր բառերի, զգալիորոն կրճատվեցին գրաբարի քերականական բազմաձևությունները: Բուռն զարգացում ապրեց արևմտահայ գեղարվեստական գրականության լեզուն և ժամանակի գրողների (Պետրոս Դուրյան, Հակոբ Պարոնյան, Երվանդ Օտյան, Գրիգոր Զոհրապ և այլն) լեզվաշինարարական աշխատանքի շնորհիվ՝ ավելի ու ավելի մշակվեց, կատարելագործվեց ու դարձավ հարուստ գրական լեզու, որը երբեք չխզեց իր կենսական կապերը հին գրական լեզվի հետ:

Եվ ահա Պետրոս Դուրյանը, որ այդ գրականության կարկառուն դեմքերից մեկն էր, թեև խիստ երիտասարդ, բայց, գիտակցելով գրաբարի հարկը ու գեղագիտական արժեքը, կարողացավ իր քերթվածներում դրոշմել բազմաթիվ գրաբարյան տարրեր, ինչով ոչ թե հակադրվում էր նոր արևմտահայերենի զարգացման միտումներին, այլ փորձում էր գրաբարի իրողությունների հմուտ օգտագործմամբ ոճաարտահայտչական նրբերանգներ հաղորդել իր բանաստեղծական խոսքին:

Արևմտահայ գրական քննադատության մեջ Դուրյանին համարել են աշխարհաբար նոր լիրիկայի հիմնադիրը:

**Դուրյանը ստեղծագործել է արևմտահայերենով, բայց հատկանշական է այն փաստը, որ նրա երկերում առանձնահատուկ տեղ են գրավում նաև գրաբարյան բառային և քերականական իրողությունները:**

Խոսելով Դուրյանի լեզվի մասին, Մատենճյանը նշում է, որ Դուրյանի լեզուն աշխարհաբարի և գրաբարի ներդաշնակ մի խառնուրդ է: Այս բնորոշումը մասամբ միայն ճիշտ կարելի է համարել: Ճիշտ է Մատենճյանի այն կարծիքը, թե Դուրյանի լեզուն նոր լեզու է, ինքնատիպ, և առանձնահատուկ, այնուամենայնիվ, «Այն

ժամանակվա լեզուն ի վիճակի չէր պատմել Դուրյանի կրակները» [3, էջ 173], դրա համար, անշուշտ, անհրաժեշտ է եղել գրաբարյան տարրի հմուտ գործածությունը, որ Դուրյանն արել է իր քերթվածների մեջ:

Դուրյանից առաջ ոչ ոք չէր գրել այդպիսի լեզվով այդքան բարձր լիրիկական ստեղծագործություններ. նոր լեզու, նոր ոճ, նոր պատկերներ: Դուրյանին կարելի է անվանել պոեզիայի մեծ նորարար:

Արևմտահայ գրականության ականավոր դեմքերից Արշակ Չոպանյանը իր ուսումնասիրության մեջ Դուրյանին անվանել է «Աշխարհաբար բանաստեղծության հայրը և ամենեն ճշմարիտ բանաստեղծը»:

«Դուրյանի տաղերը, - գրում է քննադատը, - կրակի կտորտանքներ են, մշտավառ, ոչ գոհարներ կանոնավոր շողուն ու ցուրտ» [3, էջ 133]:

Չոպանյանը իր աշխատության «Դուրյանը բանաստեղծ» հատվածում ընդգծում է. «Իր նկարները գիծ չունին: Իր վրձինը ոգեղեն փետուրի փափկությամբ շոգետեսիլ գույներու ծածանք մը կխաղցնե իր քերթվածներում կտավին վրա: Բայց զարմանալի հակադրությամբ մը, այդ տարտամությունը տարօրինակ ուժգնությամբ կվառի, այդ ծածանուտ գույները ամենեն հոծ կերպով բնությունն ու հոգին կխորհրդապատկերեն, որովհետև բանաստեղծին աննորոշ տեսողության տակ խորին զգայնություն մը կթըրթըռա և որովհետև մանրամասնությունները տեսնելու այդ անկարողությունը կամ դժկամությունը կնպաստե իրերուն իսկությանը թափանցելու» [7, էջ 166]:

Անդրադառնանք Պ.Դուրյանի քնարերգության մեջ գրաբարյան տարրի գործածմանը՝ անդրադարձ կատարելով արևմտահայերենի բառային համակարգին և մեր աշխատանքի առաջին գլխում խոսելով գրաբարի բառային իրողությունների մասին, որոնք օգտագործվել են վաղամեռիկ հանճարեղ բանաստեղծի կողմից:

Ահա վաղամեռիկ հանճարը իր գեղեցիկ ստեղծագործություններից մեկում՝ «Նայվածք մը» բանաստեղծության մեջ գործածել է գրաբարյան **սյավ** բառը, որը մեզ հայտնի է դեռ պատմահայր Մովսես Խորենացու «Արտաշես և Սաթենիկ» վիպերգից: Սա գրաբարին բնորոշ մի ձեռ է, և եթե Խորենացու վիպերգին այն հաղորդում է դասական երանգ և հանդիսավորություն, ապա Դուրյանի «Նայվածք մը» բանաստեղծության մեջ սյավ բառի գործածության պատճառը այլ է:

*Հեծաւ արի արքայն Արտաշես ի սեան գեղեցիկ*

*Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն.*

*Եւ անցեալ որպէս զարծուի սրաթել ընդ գետն,*

*Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝*

*Ընկեց ի մէջօր իրորդին ալանաց. . .*

Դուրյանական բանաստեղծության տողն ունի հետևյալ տեսքը՝

*Թե հուղարկե ինձ հեշտյալ*

*Իր աչերեն վառ ու սյալ*

*Լուսիկ*

*Կուսիկ: («Նայվածք մը»)*

Բնականաբար հարց է առաջանում՝ արդյոք ի՞նչն է պատճառը, որ Պետրոս Դուրյանը ստեղծագործել է բառի զանազան տարբերակներով՝ աչքի առաջ ունենալով բառի ինչպես արևմտահայերեն, այնպես էլ գրաբարյան պատկերը: Մենք ինքներս չենք կարող պատասխանել այդ հարցին հիմնովին, բայց համոզված ենք, որ հաճախ բանաստեղծն այդ քայլին դիմել է հանգավորման նպատակով կամ օգտվել է գրաբարյան բառային իրողությունների քարացած ձևերից, որպեսզի բանաստեղծություններին հաղորդի ոճարտահայտչական որոշակի նրբերանգ:

Համարձակվում ենք կարծել, որ Դուրյանի «Նայվածք մը» քերթվածում **սեալ** բառը ունի բանաստեղծական տողի հեշտյալ ձևին հնչունական առումով ներդաշնակելու բնույթ, այսինքն՝ ամենայն հավանականությամբ բանաստեղծական տողի հանգավորման նպատակով: Մինչդեռ հատկանշական է, որ մեկ ուրիշ գործում օգտագործել է նույն բառի ժամանակակից հայերենյան տարբերակը՝ իբրև բանաստեղծության վերնագիր «Մ՛ն, ս՛ն»-ը: Այստեղ **սև**-ը վերոնշյալ արժեքը չունի, այսինքն՝ հանգի կարգավորման գործառույթ չի կատարում, հետևաբար օգտագործված է իր արևմտահայերենը **սև** տարբերակով:

Գրաբարի անուն խոսքի մասերից Դուրյանը իր քնարական պատառիկներում օգտագործել է ածականի գերադրական աստիճանի դրսևորման գրաբարյան



տարբերակը, որն էականորեն տարբերվում, արևմտահայերենում գերադրական աստիճանի կազմությունից՝ *ամէն* բառի բացառականի հոլովաձևով: Մինչդեռ Դուրյանը ավելի հարմար է գտել ածականի գերադրականի գրաբարյան ձևը՝ *կարի* բառի օգտագործմամբ՝ ավելի նրբահունչ դարձնելու բանաստեղծական տողերը: Ածականի գերադրականի գրաբարյան ձևը ոճական նպատակներով օգտագործվել է իր երկու բանաստեղծություններում՝ «Կոկոն-ծաղիկք կույսին», «Միրեցի քեզ», ինչպես՝

*Ո՛հ, հավիտյան միշտ կոկոն*

*Կարծես զույգ մը ծաղիկ են,*

*Բայց նրման կույս սրբտերու*

***Կարի քաղցրը կը բուրեն: («Կոկոն-ծաղիկք կույսին»)***

Ինչպես գիտենք, գեղարվեստական ստեղծագործության մեջ բառը կրում է ոչ միայն որոշակի տեղեկատվություն, այլև նպատակաուղղված է ընթերցողի վրա գեղագիտական ազդեցություն գործելուն: Թերևս համարձակվում ենք կարծել, որ «Կոկոն-ծաղիկք կույսին» բանաստեղծության մեջ ևս Դուրյանը օգտագործել է *կարի* բառը բանաստեղծությանը ոճական նրբերանգ հաղորդելու և ընթերցողի վրա ներգործելու նպատակով:

Տաղանդաշատ բանաստեղծի մեկ այլ գործում՝ «Միրեցի քեզ» բանաստեղծության մեջ, Դուրյանը *կարի* բառը օգտագործել է այլ նպատակով՝

*Դու որ գիտես լոկ բուրել,*

*Գիրգ սրտերու վերք փորել,*

*Եվ կսիրես երբ կարի*

*Քեզ պաշտող սիրտն արյունի:*

Ինչպես տեսնում ենք երկրորդ բանաստեղծության մեջ **կարի** մակբայը նախորդ տողավերջում է, իսկ նրա լրացյալը (պաշտող) հաջորդ բանաստեղծական տողում է: Մեր կարծիքով բանաստեղծն այս իրողությունն օգտագործել է բանաստեղծական

հանգի ձևավորման նպատակով՝ հնչյունական ներդաշնակություն ձևավորելով *արյունի* ձևի հետ:

Պ.Դուրյանի բանաստեղծություններում քանիցս հանդիպում են դերանվան գրաբարյան ձևեր, հատկապես անձնական դերանվան երրորդ դիմաձևերը՝ *նա, նքա*, արևմտահայերենի *ան, անոնք* դերանունների փոխարեն: Այսպես, «*Հեծեծմունք*» բանաստեղծության մեջ, որտեղ Դուրյանը դարձյալ աշխարհը համարում էր «միշտ տաղտուկ», «ցավերու մեծ մայր» և ում հետաքրքիր էր, թե «երկնից դժգույն որդին» գոնե այն աշխարհում երջանի՞կ է: Գրում է.

*Նքա միմյանցս համար քանի՛*

*Էին անհո՛ւն բաց մատյաններ*

*Հո՛ւն ամեն բառ խորքը մը ուներ,*

*Իր ներքևը սիրոյ, ցախի:*

Կարելի է ենթադրել, որ տվյալ բանաստեղծության մեջ Պետրոս Դուրյանը օգտագործել է գրաբարյան *նքա* ձևը բառային միօրինակությունից խուսափելու և խոսքի արտահայտչական հնարավորությունը մեծացնելու նպատակով:

Բանաստեղծությանը արտահայտչականություն հաղորդելու նպատակով գրաբարյան *նքա* ձևի գործածությունը տեսնում ենք նաև վաղամեռիկ հանճարի «Տրտունջք» բանաստեղծության մեջ.

Եվ ի գո՛ւր ծաղկունք՝ փրթիթնե՛ր գարնան,

Միշտ խնկարկեցին խոկմանցրս խորան. . .

Ո՛հ, *նքա* ամենքը գ՛իս ծաղրեր են. . .

Աստուծո ծաղրն է աշխարհն ալ արդեն. . .

*Նքա* գրաբարյան ձևը Դուրյանը կիրառել է նաև իր մյուս բանաստեղծություններում դրանցից կարելի է առանձնացնել «*Հեծեծմունք*»

բանաստեղծությունը: Կարդալով Դուրյանի «Հեծեծմունք» բանաստեղծությունը՝ համոզվում ենք, որ իսկապես բառը գեղարվեստական պատկեր ստեղծելու հիմնական միջոցն է:

*Նոքա* միմյանցս համար քանի՞

Էին անհո՛ւն բա՛ց մատյաններ,

Հոն ամեն բառ խո՛րք մը ուներ

Իր ներքևը սիրո, ցավի:

Արդեն «*Կոկոն-ծաղիկք կույսին*» բանաստեղծության մեջ Դուրյանը ոճական նույն նպատակով օգտագործել է *նոքա* դերանվան տրական հոլովածևը, որն, ի դեպ, տեղ է գտել նաև մի քանի այլ բանաստեղծություններում՝

Ո՛հ, չէ, **նոքա** պես անբիծ

Իտալական վեհ երկրին

Եթե չունին աստեղց բույլ,

Ամպ ու կայծակ ալ չունին:

Շատ հատկանշական է վաղամեռիկ հանճարի բանաստեղծություններից մեկի վերնագիրը («Զ՛նէ պաշտեմ»), որում Պ.Դուրյանը գործածել է իրեն այնքան հոգեհարազատ **նէ** բառը /տե՛ս նաև «Նէ» «Ներա հետ» քերթվածները/՝ որպես իր անպատասխան սիրո բանաստեղծական գաղտնաբառ, որն ըստ էության հունաբան մեր երևելի այրերի կողմից հինգերորդ դարի վերջում ոսկեդենիկ գրաբարի մեջ արված հետաքրքիր նորամուծություններից մեկն է /իգական սեռի անձնական դերանուն. **Նա**-արական, **նէ**-իգական/: Լեզվի պատմության մեջ հայտնի է լեզվաբան Գրիգոր Վանցյանի տեսությունը այս հարցի վերաբերյալ. նա գրում է, որ հայերենում գոյականներից շատերի համար էլ կա սեռի տարբերակում: Գրում է, որ հայերենում անձնական դերանվան երրորդ դեմքի սեռի համար, հայերենում դեռևս հինգերորդ

դարից ստեղծվել էր *նէ* դերանունը, այն գործածել է Դավիթ Անհաղթը, այնուհետև սիրով ընդօրինակել Պետրոս Դուրյանը՝

Լուսինը ո՛չ ներա վարդն,

Եւ ոչ ալ վարդը ունի

Ճառագայթումը *նէրա*

Ճառագայթում սիրողի:

Ես դողողամ իր վըրայ

*Նէ* իմ վըրայ գորովի,

Իսկ թէ մոռնա՛յ զ՛իս օր մը. . .

Ա՛հ, այն օրը քա՛ր կտրի. . . : («Չ՛նէ պաշտեմ»)

Վանցյանը առաջարկում է խոսքում գործածել ոչ միայն արական և իգական սեռի ուղիղ ձևերը՝ նա և նէ, այլև դրանց թեք ձևերը արական-նա, նրան, նրանից, նրանով, իգական-նէ, նորա, նորանից, նորանով: *Նէ* դերանունը իր յուրահատուկ դրսևորումն է գտել հանճարեղ սիրահար պատանու «Ձոնիկք» բանաստեղծության մեջ, որտեղ կույսի գեղեցկությունն ու հմայքը չէր նժարում բնության, երկրային ու երկնային սքանչելիքներով: Բանաստեղծի ըմբռնմամբ մարդն ու կույսը ոչ թե իրենք են ձգտում բնությանը, այլ բնությունն է ձգտում նրանց, ագդվում, ներշնչվում նրանցից: Բնության գեղեցկությունները կարող են սիրելի դառնալ լոկ այնքան ու այն չափով, որքան ու որչափով հիշեցնում են մարդուն ու կույսին:

«*Հայրիկն հայոց*» քերթվածում արդեն նկատելի է, որ ոճական-արտահայտչական այլևայլ նրբերանգներին զուգահեռ, գրաբարյան այս ձևերը նպաստում են արևմտահայ բանաստեղծի խոսքարվեստի այն ընդհանուր բնավորության զարգացմանը, որը կոչվում է բանաստեղծականություն:

*Դու գրթոտ նըման երկնի հայրիկին՝ Յ՛այր ի կին՝*

*Յ՛օրոց և յ՛այլիս սփռե՛լույս և սեր,*

*Լույս ելև, է՞ր ցավի,*

*Չը գարթնու հրրճված յ'այգույն յ'այն («Հայրիկն հայոց»)*

Ինչպես նկատեցինք «Առ մայիս» քնարական պատառիկում, շատ հաճախ Դուրյանը նաև հակառակն է անում՝ գրաբարին բնորոշ **այս** դերանունն որոշիչը փոխարինելով արևմտահայերենի **սա** դերանվամբ: Այս երևույթն առկա է ինչպես «Առ մայիս» բանաստեղծությունում, որտեղ Դուրյանը խոսում է իր հոգու ծաղկի մասին, ընդ որում «ծաղիկը» գրում է գլխատառերով, որն էլ հուշում է նրա սիմվոլիկ նշանակության մասին, այդպես էլ այլ երկերում, ինչպես՝

*Ճառագայթի ու վարդ*

*Փրթթումներով վեհապանծ*

*Ես չսիրեմ սա դեմքը*

*Միրոյ ժպտով մը օծած («Զ'նե պաշտեմ»)*

Մա դերանունը իր որոշչային կիրառությամբ է հանդես գալիս նաև շատերիս հայտնի «Լճակ» ստեղծաբանության մեջ՝

*Ոչ որ ըսավ - «Մա տրդին*

*Պատռե՛նք սիրտը տըրտմագին,*

*Նայինք ինչե՛ր գրված կան. . . »*

*- Հոն հրդեհ կա, ոչ մատյան:*

Անդրադառնանք բոլոր այն գրաբարյան մակբայներին, որոնք Դուրյանը գործածել է իր տարբեր ստեղծագործություններում: Ինչպես գիտենք, մակբայները ցույց են տալիս գործողության կատարման հանգամանքները՝ տեղը, ժամանակը, ձևը, չափն ու աստիճանը: Այսպես՝ «Տրտունջք» քերթվածում հանդիպում ենք **հար** բառի գործածությանը, որը գրաբարյան ժամանակի մակբայն է՝ դիպուկ օգտագործված բանաստեղծական պատկերի արտահայտչականությունն ստեղծելու, բառային միօրինակությունից խուսափելու և բանաստեղծական տողի, ոտքերի քանակի ապահովման նպատակով:

*Գարունն ո՛չ մեկ վարդ ճակտիս դալկահար,*

*Ո՛չ երկնի շողերն ժրպիտ մ'ինձ չէր տար.*

*Գիշերն միշտ դագաղ, աստղերը ջահեր,*

*Լուսինն **հար** կուլա, խուզարկե վրհեր:*

«Հեծեծմունք»-ում բանաստեղծական խոսքի ոճավորման ու նաև հանգավորման նպատակով Դուրյանը օգտագործել է գրաբարյան **մի առ մի** ձևի մակբայը՝

*Այն հյուսկեններն երկրնքին*

*Այն ամպերը ձյունաթորմի՝*

*Մինչ երեկո, ո՛հ, **մի առ մի***

*Մեր նայվածքը գրավեին. . .*

Պ. Դուրյանի բանաստեղծություններում առանձնապես լայն գործառություն ունեն գրաբարի նախդիրներն ու նախադրությունները: Բոլորովին էլ պատահական չէ վերջիններիս մեծաքանակ գործածումը նրա բանաստեղծական խոսքում: Շնորհիվ գրաբարում իրենց առանձնահատուկ դերի ու նշանակության, տարբեր հոլովների հետ յուրահատուկ քերականական իմաստային նրբերանգներ արտահայտելու, հոլովաձերին փոխարինելու կարողության՝ այս սպասարկու բառերը գրաբարում ունեին անգնահատելի դեր խոսքի կառուցման, նաև ոճական գունավորման տեսակետից: Եթե ասվածին ավելացնենք նաև այն, որ դրանցով հաճախ արտահայտվում են նաև քերականական իմաստների այնպիսի նրբերանգներ, որոնք հոլովաձևերով հնարավոր չէ արտահայտել /բաղդատական, բացասման, փոխակերպման, պարառության և այլ բազմաթիվ հարաբերություններ/, ապա ավելի լիարժեք կլինի մեր պատկերացումն այս սպասարկու բառերի [3, էջ 249]:

Պ.Դուրյանի բանաստեղծություններում հանդիպում են գրաբարի բոլոր վեց նախդիրները՝ **առ, ց, ընդ, ըստ, ի(յ), գ**, իհարկե, տարբեր հաճախականությամբ: Այսպես, **առ** նախդիրը գործածվել է 10 անգամ հինգ բանաստեղծություններում («Իդձք **առ** Հայաստան», «Առ կույսն», «Մանուկն **առ** Խաչ», «Միրել», «Առ մայիս», «Երեկոյան բալն կը սողար բարդիլ խավ») և միայն հայցական հոլովի հետ՝ արտահայտելով դիմում / առ Հայաստան-Հայաստանին, առ կույսն-կույսին, առ մայիս-մայիսին.

*Ինչպես և իմ դյուրյալ ակնարկս առ արոտ՝*

*Ձոր մըթագնեց մառախուղ մի նախանձոտ,*

*Ի՛նչ չը կրցի ընդնշմարել էակն ան,*

*Ձոր գգվեին ճաճանչ, զեփյուռ իրիկվան.*

Կարծում ենք, որ Դուրյանի պոեզիայում հանդիպող այլ դեպքերում **առ** նախդիրը, գործածվելով հայցական հոլովի հետ, արտահայտում է **վերաբերության** իմաստ: Ասվածը հաստատում են նրա «Առ Մայիս» և «Երեկոյան բալն կը սողար բարդիլ խավ» «բանաստեղծություններով /առ Մայիս – մայիսի մասին կամ մայիսի վերաբերյալ/: Ահա մի քառատող «Երեկոյան բալն կը սողար բարդիլ խավ» բանաստեղծությունից.

*Մարը մտնող արփվույն մարեր հուսկ շառայ,*

*Սառնամանուտ բլրոց վըրա քայլ առ քայլ,*

*Ինչպես հյուծյալ կույսի մ՛ականարկ առ դամբան՝*

*Ուր պարեն ցուրտ ծիծաղք սիրո դառնության. . .*

*Ինչպես և իմ դյուրյալ ակնարկս առ արոտ. . .*

Պետք է կարծել, որ գրաբարյան նախդրավոր կառույցի /**առ դամբան**/ գործածմամբ բանաստեղծին հաջողվել է ավելի հանդիսավորել անպատասխան ու դառը սիրո պատճառով գերեզման փնտրող դժբախտ սիրահարի ապրումների ողբերգականությունն ու հոգեկան ծանրագույն վիճակը մայրամուտի արևի մարող շողերի ու սառնամանուտ բլուրների տխուր ֆոնի վրա: **Առ արոտ** կապակցությամբ ևս Դուրյանը գործածել է **առ** նախդիրը *արոտի* հետ՝ մատնանշելով վերաբերություն:

**Յ** նախդիրը Դուրյանի բանաստեղծություններում գործածվում է միայն հայցական հոլովի հետ՝ արտահայտելով **մինչև մի ժամանակ** իմաստը: Դուրյանն այն գործածել է իր երկու բանաստեղծություններում՝ «Առ կույսն», «Կը սիրեն՞ զքեզ»: Առաջինում Դուրյանը երկու անգամ է օգտվել **ց** նախդրի գործածությունից :

*Ո՛հ, մինչև **ցե՛րք**, ըսե՛, ո՛ կույս, հոգիս ըլլա գեղույդ գերի,*

*Եվ մինչև **ցե՛րք** թրթռան աղիք ցաված սրտիս և քնարի. . .*

*Լոկ համբուրիկ մ'ուզեցի քաղել այտեղ մեկ թարմ վարդ,  
Ճառագայթ մը խընդրեցի աչերեղ երկնազվարթ:*

Նույնը կարող ենք ասել նաև «Կը սիրեմ զքեզ» ստեղծագործության վերաբերյալ՝  
*Ցայգն՝ աստղերուն փառփուն՝ լուսնուն սիրադեմ,  
Ցերեկն այլաց, ծաղկանց ժըպտիս, մեկուն. . . գեթ. . .  
Իսկ քեզ համար ես արցունքով կաղոթեմ,  
Դու չես շնորհեր նայվածք մ'ինձ սև աչերեղ:*

Ահա **ընդ նախդիրը**, որ գրաբարում շատ գործուն է և կարող է հանդես գալ բոլոր թեք հոլովաձևերի հետ, Դուրյանի քառասունմեկ բանաստեղծություններից ընդամենը մեկում ենք հանդիպում՝ («Կը սիրեմ զքեզ»)

*Փչեց խոնարհ*

*Հոգի և լույս,*

*Մեր **ընդ** աշխարհ:*

Սա, հիրավի, Դուրյանի եզակի բանաստեղծություններից է, որում չկան տխուր նոտաներ, անպատասխան սիրո տվայտանքներ ու համր տառապանք, նաև միակը, որտեղ նա գործածել է գրաբարյան **ընդ** նախդիրը հայցական հոլովի հետ՝ իր սիրո խոստովանությունն *ընդ աշխարհ* /աշխարհում/ հնաոճ հանդիսավորությամբ հայտնի անելու նպատակով:

Այդպես էլ՝ **ըստ** նախդիրն է գործածել սեռական-տրականի հետ /կրկին ընդամենը մեկ անգամ/, «Սիրել» բանաստեղծության մեջ.

*Ես ուզեցի քրնարով մի*

*Լոկ սիրել հոս, հոս դալկահար,*

*Պաշտել, գրկել միայն քրնար,*

*Սիրող էակ ճանչել զանի,*

*Ըստ իմ քմաց լարել աղի,*

*Եվ սրտակցիլ սիրողաբար:*



Մաքուր սիրո խոստովանանք է, սիրո քնարն իր *քմայքով/ըստ քմաց/* լարելու անբացատրելի ցանկություն՝ արտահայտված գրաբարյան նախդրավոր կապակցությամբ, որը բանաստեղծական բարձր ոճ է ապահովում երկում:

Բանաստեղծի ավելի քան քառասուն քերթվածներում ամենաշատ գործածություն ունեցող նախդիրները գրաբարի *ի* և *զ* նախդիրներն են, որոնք բանաստեղծական տողերում ունեն գանազան կիրառություններ, հանդես են գալիս տարբեր հոլովածների հետ՝ արտահայտելով բազմապիսի իմաստներ:

Այսպես, **Ի** նախդիրը, որ հին հայերենում գործածվել է տրական, հայցական և բացառական հոլովների հետ, առկա է Դուրյանի քսան բանաստեղծություններում շուրջ հիսուն անգամ (*«Վիշտք Հայուն»*, *«Երգ մարտին Վարդանանց»*, *«Ի դիմավորության Ամեն Հայրիկին»*, *«Հայրիկն հայոց»*, *«Ի պատրիարքարան ընտրություն Ամեն Հայրիկին»*, *«Իդձք առ Հայաստան»*, *«Նոր սև օրեր»*, *«Մանուկն առ խաչ»*, *«Իցի՛վ թե»*, *«Սիրեցի քեզ»*, *«Ներա հետ»*, *«Կույսն լքյալ»*, *«Նայվածք մը»*, *«Դրժել»*, *«Սև՛, սև՛»*, *«Հեճեճ-մունք»*, *«Հձձունք»*, *«Ձոնիկք»*, *«Հուշք»*, *«Ահա օրն երջանիկ»*, *«Հայուհին»*): Դուրյանն **ի** նախդիրն օգտագործում է հիմնականում հայցական հոլովի հետ՝ կա՛մ ստեղծելով տպավորիչ բանաստեղծական պատկերներ, կա՛մ դրսևորելով սիրատենչ հոգու տվայտանքներ, կա՛մ ձգտելով գրաբարյան տարրի օգնությամբ ավելի պատկերավոր ու արտահայտիչ դարձնել բանաստեղծական տողը, կա՛մ ուղղակի նախդրավոր կառույցը ծառայեցնել իր չափածո տողի հանգավորման խնդրին և կա՛մ այս ամենը մեկտեղել նույն բանաստեղծության շրջանակներում:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԳՐԱԲԱՐՅԱՆ ՔԵՐԿՎԱԿԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Պ.Դուրյանի բանաստեղծական ժառանգությունը, իհարկե, մեծ չէ, սակայն մեծարժեք է ն՛ իր գեղարվեստականությամբ, արտահայտած գաղափարների համամարդ-կայնությամբ, ն՛ ներանձնական թախծի, տառապանքի ու սիրո

անպատասխան զգացումի ողբերգականությամբ, և՛ այդ ապրումների ու զգացումների բանաստեղծական արարումի ինքնատիպ ու ներդաշնակ ձևերին տիրապետելու արվեստով: Վերջինս երևան է գալիս նաև բառերի գրաբարին բնորոշ քերականական ձևավորումները՝ բառաձևերը օգտագործելու երիտասարդ բանաստեղծի անուրանալի տաղանդի մեջ, որը փայլուն արտահայտություն է գտել նրա անզուգական քերթվածներում:

Ասվածն առաջին հերթին վերաբերում է անուն խոսքի մասերի, հատկապես գոյականի գրաբարյան քերականական իրողություններն իր բանաստեղծական խոսքում կիրառելու Պ.Դուրյանի ընդգծված մղումին: Այդ իրողություններից է մասնավորապես անունների հոգնակի կազմության ձևը /ք մասնիկով/, ինչը բանաստեղծը շռայլորեն է գործածել իր ստեղծագործություններում. Այսպես՝ օրինակ «Կույսն լքյալ» բանաստեղծության մեջ Դուրյանը օգտագործում է **ծաղիկք** և **լեռանք** գրաբարյան հոգնակի ուղղական բառաձևերը՝ նպատակ ունենալով ապահովել բանաստեղծության հանգավորումը: Այսպես՝

Ոսկի սփռեց **լեռանքն** արփի,

Ծիծաղեցավ լուսինն յ՛ա լի,

Կա՛յծ ու ծիծաղ, **ծաղիկք** համբուն,

Թերթեր, ուր սեր կարդա զվարթուն.

Ո՛հ, ինչո՞ւ գունատ

Է կույսին ճակատ՝

Արդեն «Կույսն լքեալ» բանաստեղծության մեջ Դուրյանը գործածել է **թռչունք** գրաբարյան հոգնակի ուղղական բառաձևը՝ բանաստեղծությանը հաղորդելով արտահայտչական նրբերանգ:

**Թռչունք** մըթին անտառաց խոր

Ձայնակցին, հեշտ սիրո ժրխո՛ր . . .

Ո՛հ, ինչու՞ լինի

*Լուռ կույս լեզվանի: («Կույսն լքեալ»)*

Քանքարավոր պատանին իր «Ահա սրանա օրն երջանիկ» բանաստեղծության մեջ գործածել է *իղձք* և *թախիծք* գրաբարյան հոգնակի ուղղական բառաձևերը: Հետաքրքրականը այն փաստն է, որ բանաստեղծը կարող էր գործածել իղձք բառի արևմտահայերեն տարբերակը, որը կլիներ *իղձերք* կամ *ըղձանք*, սակայն, նպատակադրվելով ապահովելով բանաստեղծության հանգավորումը՝ օգտագործում է *իղձք* գրաբարյան հոգնակի ուղղական բառաձևը:

Ահա սրանա օրն երջանիկ՝

Ի հիշատակ ոսկեղենիկ,

Յորում լըցան հէք հոգւոյս *իղձք*,

Ետուն տեղի սրտես *թախիծք*. . .

(«Ահա սրանա օրն երջանիկ»)

Դուրյանի չափածոյում մեծ ակտիվություն ունի հարակատար դերբայը: Այն մեծ գործածություն ունի «Իմ ցավը» բանաստեղծությունում՝ *ծարաված*, *ջ'այրած*, *չը գրկած*, *չ'անդորրած*, *չ'օգնած*:

*Մուրբ տենչերով լոկ ծարաված՝*

*Յամաք գտնե՛լ աղբերքն յամայր,*

*Յամքի՛ լ՛ ծաղիկ հասակի մեջ,*

*Ո՛հ, չէ այնչափ ցավ ինձ համար:*

*Ջերմ համբույրով մը դեռ չ'այրած*

*Սա ցուրտ ճակատս դալկահար՝*

*Հանգչեցունե՛լ հողե բարձին,*

*Ո՛հ, չէ՛, անչափ ցավ ինձ համար:*

*Քաղցր երազով մ'հրդի մրափ մը*

*Չ'անդորրած գլուխս մրրկահար՝*

*Ննջե՛լ հողե վերմակի տակ,*

*Ո՛հ, չէ՛, անչափ ցավ ինձ համար: («Իմ ցավը»)*

«Նայվածք մը» բանաստեղծության մեջ օգտագործվել է գրաբարի ներկա ժամանակի եզակի I դեմքի բառաձև, իսկ մեկ այլ՝ «Ձնէ պաշտեմ» բանաստեղծությունում՝ միաժամանակ ն՛ գրաբարին, ն՛ արևմատահայերենին բնորոշ ներկայի ձևերը՝ ժխտական խոնարհումով.

*Տերններուն շուքն ինկած՝*

*Ո՛րչափ սիրեմ շունչն հովտաց՝*

*Մեղմիկ,*

*Հողմիկ. . .*

\*\*\*

*Ճառագայթի ու վարդի*

*Փթթումներով վեհապանձ՝*

*Ես չը սիրեմ սա դեմքը*

*Միրո ժպտով մը օծած:*

Հատկանշական է տաղանդավոր պատանու «Միրեցի քեզ» բանաստեղծությունը, որում բազմազան են ստացական հողի կիրառությունները, ինչպես՝

*Կը փետտեիր ծաղիկ մի,*

*Հառած շողից աչքդ երկնի:*

*Եվ թափթփել ի քո գիրկ՝*

*Ջորեին մատունքող գիրգ:*

Ստացական հողի կիրառության ենթ հանդիպում Դուրյանի սիրո ցավերն ու տառապանքներն արտահայտող «Հեծեծմունք» բանաստեղծության մեջ, ինչպես՝

*Նոքա միսյանցս համար քանի՛*

*Էին անհո՛ւն բաց մատյաններ*

*Հո՛ւն ամեն բառ խորքը մը ուներ,*

*Իր ներքևը սիրոյ, ցաւի («Հեծեծմունք»):*

«Իցի՛ վ թե» ստեղծագործությունում աչքի է ընկնում գրաբարյան աչաց (գրաբարի հոգնակի սեռական) բառի ստացական հողով գործածությունը՝

*Ո՛հ, ի՞նչ ես դու, սե՛ր, երկնի հուր կամ ժրպի՛ տ. . .*

*Չունի երկին աչացո՞ղ կայծերն ու կապուտ. . .*

*Վարդը չ՛ունի քու լանջո՞ղ ամբիծ, լուսափթիթ,*

*Չ՛ունի լուսինն վարդերն շիկնոտ այտերուդ:*

«Հայուհին» բանաստեղծությունում ևս շատ են ստացական Ս հողի գործածությունները մեկ քառատողում հանդիպում ենք միանգամից ստացական հողի երեք գործածություն, օրինակ՝

*Այլ չըգիտեմ թե ինչու՞*

*Կրկին աչերս հառած՝*

*Իմ թերթիկիս վրբա միշտ՝*

*Միրոս էր ամբողջ խրոռված:*

Ստացական հոդերի գործածությամբ իր տեղը չի զիջում նաև մանկահասակ հանճարի «Առ կույսն» բանաստեղծությունը: Այստեղ ևս մեկ քառատողում կարող ենք հանդիպել ավելի քան ստացական հոդի գործածության չորս դեպքերի, օրինակ՝

.....

*Ո՛հ, մինչև ց՛ե՛րբ, քսե՛, ո՛կույս, **հոգիս** ըլլա գեղույդ գերի,  
Եվ մինչև ց՛ե՛րբ թրթռան աղիք ցաված **սրտիս** և քնարի,  
Լոկ համբուրիկ մ՛ուզեցի քաղել **այտեղ** մեկ թարմ վարդ,  
Ճառագայթ մը իրնդրեցի **աչերեղ** երկնազվարթ: («Առ կույսն»)*

Ստացական հոդը իր դրսևորումն է գտել պատանի, բայց և հանճարեղ բանաստեղծի հայրենասիրական մտորումներն ու տոգորումները արտահայտող «Իմ ցավը» բանաստեղծություն մեջ

*Ջերմ համբույրով մը դեռ չ՛այրած  
Սա ցուրտ **ճակատս** դալկահար՝  
Հանգչեցունե՛լ հողե բարձին,  
Ո՛հ, չե՛, անչափ ցավ ինձ համար:*

Ինչ վերաբերում է գրաբարյան *մի* անորոշ հոդին, ապա արձանագրվում է դրա գրաբարաձև (վերջադաս) գործածության մեկ դեպք՝ *քնարով մի*, մյուսները արևմտահայերենին բնորոշ հատուկ ձևեր են (փունջ մը, բույլ մը, գեղուհի մը, օր մը և այլն)՝

*Ես ուզեցի **քնարով մի**՝  
Լոկ սիրել հոս, հոս դալկահար,  
Պաշտել, գրկել միայն քնար,  
Միրող էակ ճանչել զանի,  
Ըստ իմ քրմաց լարել աղի,  
Եւ սրտակցիլ սիրողաբար:*

«Միրեցի քեզ» -ում գործածվել է գրաբարյան նախադասությունը, որը անշուշտ հիշեցնում է «Արտաշես և Սաթենիկ» վիպերգը և բնութագրում է երիտասարդ սիրահարի հոգեկան ապրումը.

*Շաղի, շողի ժամք էին,*

*Վարդից հրդեհ կար յերկին՝*

*Փոխան ամպոց հուր հյուսքի.*

*Տեղա՛ր մարգրիտ և ոսկի:*

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով և վերլուծության ենթարկելով գրաբարյան տարրը Պետրոս Դուրյանի քնարական քերթվածներում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

1. Պետրոս Դուրյանի քնարերգության մեջ մեծ տեղ է զբաղեցնում գրաբարյան տարրը՝ գրաբարյան բառերը և բառաձևերը:
2. Վաղամեռիկ հանճարի պոեզիայում հատկապես շատ են օգտագործված գրաբարյան նախդիրները, նախադրությունները, եղանակավորող բառերը (*բանաստեղծն անգամ ունի «Իցի՛վ թե» վերնագրով բանաստեղծություն, որը եղանակային իմաստ է արտհայտում*), մակբայները, ածականների

- համեմատության աստիճանների կազմության ձևերը, դերանունները:  
 Համեմատաբար քիչ քանակ են կազմում գրաբարյան գոյականների  
 գործածությունը:
3. Իր գործածության հաճախականությամբ Դուրյանի պոեզիայում հատկապես  
 աչքի է ընկնում *ի* նախդիրը:
  4. Պատանի քնարերգակը իր գեղարվեստական պատառիկներում օգտագործում  
 է նաև գրաբարյան *ըստ, ընդ, առ* նախդիրների հարուստ  
 հնարավորությունները:
  5. Վաղամեռիկ պատանու բանաստեղծություններում մեծ տեղ են գրավել նաև  
 գրաբարյան դերանվանական ձևերը, ուոնք կիրառվոլ են բանաստեղծությանը  
 ոճաարտահայտչական նրբերանգ հաղորդելու, ինչպես նաև  
 բանաստեղծության հանգավորումը ապահովելու նպատակով:
  6. Նախդիրների համեմատությամբ ավելի սակավ են նախադրությունների  
 գործածությունը, թեև դրանք շատ քիչ են գործածված, սակայն բավականին  
 տեղին են բանաստեղծության ոտքին, տաղաչափական հանգին  
 համապատասխան:
  7. Պետրոս Դուրյանը իր բանաստեղծություններով մեծ տեղ է տալիս գրաբարյան  
 քերականական ձևերի օգտագործմանը:
  8. Պատանի ստեղծարարը իր քնարական ստեղծագործություններում  
 օգտագործում է մեծ թվով գրաբարյան ժամանակային ձևեր, որոնք  
 ապահովում կամ բանաստեղծական տողի հանգավորումը, կամ  
 բանաստեղծության արտահայտված մտքի զգացմունքայնությունը:
  9. Բանաստեղծություններում Դուրյանը մեծ տեղ է հատկացրել ստացական հոդի  
 գործածությանը բանաստեղծական խոսքը ավելի ներգործող դարձնելու  
 նպատակով:
  10. Գրաբարյան կապակցությունների առկայությունը Դուրյանի քնարական  
 պատառիկներում, ապացույցն է այն բանի, որ վաղամեռիկ պատանին,  
 ցանկացել է հանդիսականության նրբերանգ հաղորդել իր  
 բանաստեղծություններին՝ դարձնելով իր խոսքը գրավիչ և ազդեցիկ:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1) Ավետիսյան Յու. , Արևմտահայերենի քերականության ձեռնարկ, Եր. , 2001, 109 էջ,
- 2) Դուրյան Պ. , Երկեր, Եր. , 1947թ. , 441 էջ,
- 3) Դուրյան Պ. , Երկերի ժողովածու, Եր. , 1971թ. , 366 էջ,
- 4) Թերզիբաշյան Վ. , Պետրոս Դուրյան, Եր. , ՍՍՌ, ԳԱ, 1959թ. , 194 էջ,
- 5) Խաչատրյան Լ. , Թոսունյան Գ. , Գրաբարի դասագիրք, Եր. , «Զանգակ-97», 2004թ. , 383 էջ,
- 6) Խաչատրյան Լ. , Գրաբարի ուսումնական բառարան, Վենետիկ 2016, 448 էջ,
- 7) Ղազարյան Ս. , Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր. , 1954 թ. , 465 էջ,
- 8) Չոպանյան Ա. , Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը, Եր. , 1967թ. , 241 էջ,
- 9) Սարգսյան Ա. , Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Եր. , 1985թ. , 327 էջ,

10) Սարգսյան Ա. , Արևմտահայերենի քերականությունը, Եր.

11) Սաքապետոյան Ռ. , Արևմտահայերենի դասագիրք, Եր. , 2006թ. , 494 էջ: